



ՎԻՆՄԱՄ ՍԱՐԴՈՅԱՆ

Անունս Արամ է

ԱՄԱՌԸ ԵՐԲ ԵՂԱՆԻ ՍՊԻՏԱԿ ՁԻ ՄԸ ՈՒՆԵՑԱՆՔ

Հին բարի օրերեն մեկը՝ երբ ես հագի տասը տարեկան էի եւ աշխարհը լի էր երեւակայելի ամեն տեսակ շքեղանքով եւ կեանքը դեռ երազ մը սոսկ՝ հաճոյալից եւ գաղտնալից. հօրեղբօրորդիս Մուրադ, որ խելառին մեկը կը համարուէր ինձմէ գատ իրեն ծանօթ ուրիշ ամեն մարդու կողմէ. ժամն առաւօտեան չորսին մեր տունն եկաւ եւ սենեակիս պատուհանը բախելով արթնցուց զիս:

– Արա՛մ, ձայնեց ան:

Անկողնէս վեր ցատկելով պատուհանէն դուրս նայեցայ: Աչքերուս չէի կրնար հաւատալ:

Արշալոյսը դեռ ծագած չէր թեպէտ, բայց ամառ էր եւ լուսաբացը ո՛չ շատ հեռու. ուստի բաւականաչափ լոյս էր վստահանալու համար թէ չէի երագեր:

Հօրեղբօրորդիս Մուրադ բազմած էր գեղանի սպիտակ ձիու մը վրայ: Լուխս պատուհանէն դուրս ցցեցի եւ աչքերս շփեցի:

– Այո՛, ըսաւ ան Հայերէն, տեսածդ երազ չէ, այլ՝ ձի մը: Աճապարելու ես. եթէ դուն ալ կը փափաքիս հեծնել:

Ինձի անծանօթ չէր թէ Մուրադ կեանքի վայելքին սիրահար մ'էր ասելի քան ուրիշ մեկը՝ որ սխալմամբ ինկած էր այս մոլորակին վրայ: Բայց եւ այնպէս անկարող էի տեսածիս հաւատալու:

Նախ եւ առաջ՝ իմ կանխագոյն յիշողութիւններս հիստուած էին ձիերու շուրջ, իսկ առաջին տենչանքներս կեդրոնացած՝ ձի հեծնելու վրայ:

Ասիկա իրերու կացութեան գնայելի դրուագն էր:

Երկրորդ՝ աղքատ էինք մենք:

Իսկ այս՝ իրերու կացութեան այն դրուագն էր՝ որ աչքերու տեսածին հաւատալու արգելք կը հանդիսանար:

Աղքատ էինք մենք: Դրամ չունէինք: Մեր բովանդակ տոհմը չքատր էր: արօղլանեան գերդաստանի մէն մի շատաւոր աշխարհի ամենէն ապշեցուցիչ եւ գաւեշտալի չքատրութեան մէջ կ'ապրէր: Ո՛չ ոք, ո՛չ իսկ մեր ընտանիքի ծերունիները կարող էին ըմբռնել թէ ո՞րկէ կը ճարէինք մեր փորերը կուշտ պահելու համար հարկ եղած դրամը: Կարեւորագոյնն այն էր սակայն, որ մենք համբաւատր էինք մեր պարկեշտութեամբ: Մենք մեր պարկեշտութեամբ համբաւատր եղած էինք շուրջ տասնըւմէկ դարեր, նոյնիսկ այն ժամանակ՝ երբ ամենափարթամ գերդաստանը կը հանդիսանայինք երկրի մը մէջ, գոր սիրած էինք շփոթել աշխարհին հետ: Մենք նախ հպարտ էինք՝ ապա պարկեշտ. եւ յետոյ կը հաւատայինք շիտակի եւ սխալի սկզբունքին: Մեզմէ ո՛չ ոք կ'ուզէր օգտուիլ ուրիշի մը նեղ դրութենէն. իսկ գողութեան խօսքն իսկ կարելի չէր ընել: Հետեւաբար՝ թեպէտ կը տեսնէի այդ վերին աստիճանի գնայլելի ձին, թեպէտ կ'առնէի անոր վերին աստիճանի ախորժելի հոտը, թեպէտ կը լսէի անոր վերին աստիճանի զգիլիչ շնչատութիւնը, բայց չէի կրնար հաւատալ թէ այն կարող էր ռելէ կապ ունենալ Մուրադ հօրեղբօրորդոյս հետ, կամ ինձ հետ կամ մեր ընտանիքի նիրհած թէ արթուն ռելէ մէկ այլ անդամին հետ: Որովհետեւ գիտէի թէ Մուրադ չէր կրնար գայն գնած ըլլալ, ապա ուրեմն գողցած ըլլալու էր, իսկ ես կը մերժէի հաւատալ թէ ան երբեւիցէ կարող էր գողութիւն ընել:

Անհնար էր արօղլանեան ընտանիքի ռելէ մէկ անդամին համար գող մ'ըլլալ: Ակնարկս նախ սեւեռեցի հօրեղբօրորդոյս եւ ապա՝ ձիուն վրայ: Երկուքին ալ դէմքը կը շողար բարեպաշտիկ անդորրութեամբ եւ խնդումով մը, ինչ որ մէկ կողմէն ինձի կ'առթէր բերկրանք, միւս կողմէ՝ սարսափ:

– Մուրա՛դ, սկսայ, ուրկէ՞ գողցար այս ձին:

– Պատուիսնէն վա՛ր ցատկէ, եթէ կը փափաքիս ձի հեծնել, եղաւ իր կտրուկ պատասխանը:

Ճիշդ էր ուրեմն: Իսկապէս ան գողցած էր ձին: Այլեւս ներելի չէր այդ մասին տարակուսիլ: Այժմ ան եկած էր ինձ եւս հեծնելու պատեհութիւնը տալու, եթէ կը փափաքէի:

Սակայն վերջ ի վերջոյ ինձ այնպէս թուեցաւ թէ սոսկ հեծնելու նպատակով կատարուած ձիու գողութիւնն էր ռելէ այլ տեսակի, գոր օրինակ, դրամի գողութիւնը նոյնօրինակ բաներ չէին: Որքան իմ խելքս կը գօրէր՝ ձիու գողութիւնը

գուցէ երբեք ալ գողութիւն չէր: Եթէ դուք եւս ինձ եւ Մուրադ հօրեղբօրորդոյս
պէս ձիու խենթ եղած ըլլայիք, դուք եւս, գողութիւն պիտի չսեպէիք
կատարուածը: Պէտք չէր որ գողութիւն համարուէր այն, քանի որ ձին ծախու չէր
հանուած, իսկ ես վատահ էի թէ այդ բանը երբեք տեղի պիտի չունենար:

– Սպասէ՛ հագուիմ, ըսի:

– Շա՛տ լաւ, բայց աճապարէ՛, պատուիրեց ան:

Հագուստներս հապճեպով վրաս նետելով պատուհանէն ցատկեցի բակը եւ
բարձրացայ ձիու քամակը՝ Մուրադ հօրեղբօրորդոյս ետեւը:

Այդ տարին մենք կը բնակէինք քաղաքին ծայրամասը՝ Ուոլնըտ փողոցին վրայ:

Մեր տան ետեւ կը տարածուէր բաց դաշտը – այգիներ, մրգաստաններ,
ջրատուներ եւ դաշտողիներ: Երեք ընկեր չանցած արդէն Օլիվ փողոցին վրայ
էինք եւ ձին սկսած էր համաշափ ընթանալ: Օդը թարմ էր եւ շնչելն հաճելի:

Հրաշալի էր զգալ ձիուն վագրը: Մուրադ՝ որ մեր ընտանիքի ամենէն խենթով
անդամներէն մէկն էր նկատուած, սկսաւ երգել, ըսել կ'ուզեմ, գոռալ:

Ամէն ընտանիք իր մէջ կ'ունենայ խենթ երակ մը եւ հօրեղբօրորդիս Մուրադ
նկատուած էր բնական շառաւիղը մեր տոհմի այդ խենթ երակին: Իրմէ առաջ կու
գար Խոսրով հօրեղբայրս, վիթխարի մարդ մը՝ սեւ մազերով ծածկուած հուժկու
գլուխով եւ պեխերով՝ որ ամենահաստն էին Սան Վոկին հովտին մէջ: Մարդ մը՝
խառնուածքով ա՛յնքան վայրագ, ա՛յնքան դիւրաբորբոք եւ անգուսպ՝ որ
հանդիպողը կը պապանձեցնէր միմիայն վրան գոռալով – վնաս չունի, ականջ
մի՛ տար:

Այդքան միայն. ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Եւ հոգ չէր թէ ո՛վ ինչի մասին կը խօսէր:
Անգամ մ'իր սեփական որդին՝ Արաք ութը բլակ վագելով կ'երթայ սափրիչի մը
խանութը, ուր իր հայրը պեխերը կոկել կու տար, յայտնելու համար որ իրենց
տունն հրդեհ էր ինկած: Մեր Խոսրովն է որ կը շտկուի իր աթոռին մէջ ու գոռալ –
վնաս չունի, ականջ մի՛ տար: Սափրիչը կը միջամտէ – Բայց տղան կ'ըսէ թէ
տունը հրդեհ է ինկած: Խոսրով կը գոռայ նորէն – հե՛րիք է, վնաս չունի ըսի, չէ՞:
Հօրեղբօրորդիս Մուրադ ահա այս մարդուն շառաւիղը կը նկատուէր, թէպէտեւ
Մուրադին հայրը Չօհրապն էր, որ բացի գործնական մէկն ըլլալէ ուրիշ
արժանիք չունէր: Ահա թէ ի՛նչ էր իրերու վիճակը մեր տոհմին մէջ: Մէկը կարող
էր իր որդոյն մսին հայրն ըլլալ, բայց այդ դեռ չի նշանակեր թէ ան նաեւ հայրն է
անոր հոգոյն: Մեր տոհմի հոգեկան յատկութեանց բաշխումը սկիզբէն ի վեր
եղած էր քնահաճ եւ խտտորնակ:

Ձին հեծանք թէ չէ՝ հորեղբորորդիս սկսաւ երգել: Կարծես թէ կը գտնուէինք մեր պապենական երկիրը, որը մեր դրացիներէն գէթ ոմանց կարծիքով, մեզի յարմար միակ վայրն էր: Ձիուն թոյլ տուինք որ ուզածին չափ վազէր:

Ի վերջոյ հորեղբորորդիս Մուրադ խօսք առաւ կրկին – վա՛ր իջի՛ր, ես կ'ուզեմ մինակս հեծնել:

– Թոյլ պիտի տա՞ս որ յետոյ ես ալ մինակս հեծնեմ:

– Ատիկա ձիուն գիտնալիք բանն է, վա՛ր իջի՛ր, կրկնեց հորեղբորորդիս:

– Ձին վստահաբար թոյլ կու տայ որ ես ալ հեծնեմ, շարունակեցի:

– Այդ կը տեսնենք, պատասխանեց ան: Մի՛ մոռնար որ ես իմ սեփական վարուելակերպս ունիմ ձիերու հետ:

– Քու ձիերու հետ ունեցած վարուելակերպդ ե՛ս ալ ունիմ, պնդեցի:

– Վա՛ր իջիր: Էթ քու ապահովութեանդ սիրոյն յուսանք որ այդ այդպէս է, ատելցուց Մուրադ:

– Շա՛տ լաւ. մի՛ մոռնար որ ինծի ալ թոյլ պիտի տաս մինակս հեծնել- պնդեցի ես:

Ես վար իջայ, իսկ հորեղբորորդիս ձին կրունկներովը խթանելով հրամայեց անոր

– վազէ՛: Ձին վեր ցցուեցաւ իր ետեւի սրունքներուն վրայ, խրխնջաց եւ անձնատուր եղաւ խօլական սրարշաւի մը:

Ասկէ առաջ երբեք ասկէ աւելի ակնհաճոյ տեսարանի մը առջեւ չէի գտնուած:

Մուրադ ձին սրընթաց քշեց չոր խոտերով լեցուն դաշտի մը մէջէն դէպի ջրառու մը, ձիով ցատկեց առուին վրայէն եւ հինգ րոպէ ետք վերադարձաւ վրան գլուխը թրջած:

Արեւը վեր կը բարձրանար:

– Այժմ հեծնելու կարգն իմս – վերսկսայ ես:

Մուրադ ձիէն վար ցատկելով հրամայեց ինձ – հեծի՛ր:

Նետուեցայ ձիուն քամակը եւ պահ մը ամենասարսափելի վախն զգացի: Ձին անշարժ կեցած էր:

– Ինչի՞ է կը սպասես. կողերը խթանէ, պատուիրեց Մուրադ: Չայն իր տիրոջը վերադարձնելու ենք դեռ մարդը անկողնէն չելած:

Խթանեցի ձիուն կողերը: Ան կրկին վեր ցցուեցաւ, խրխնջաց եւ սկսաւ սուրալ:

Ինչ ընելիքս չէի գիտեր: Փոխանակ դաշտի մէջէն դէպի ջրառուն արշաւելու՝ ձին ճամբայ ինկաւ դէպի Տիգրան Հալէպեանի այգին, եւ երբ հոն հասանք, սկսաւ ցատկոտել որթատունկներու վրայէն: Ան արդէն եօթը որթատունկերու վրայէն ցատկած էր՝ երբ ես վար ինկայ: Հակառակ ատոր ձին շարունակեց իր վագրը:

Մուրադ ճամբան ի վար վագելով կը պոռար – քու մասիդ չէ որ մտահոգուած եմ, կարենորը այդ ձին բռնելն է: Դուն ա՛յս կողմը գնա, ես ալ սա՛ կողմը կ'երթամ: Եթէ իրեն հանդիպելու ըլլաս՝ հետը քաղցրութեա՛մբ վարուէ, ես շուտով կը հասնիմ:

Ես իմ ճամբաս շարունակեցի դարվար՝ մինչ հորեղբորորդիս դաշտին մէջէն կը յառաջանար դէպի ջրատուն: Կէս ժամ անցաւ մինչեւ որ Մուրադ ձին գտաւ եւ ետ բերաւ գայն:

– Շո՛ւտ, վրա՛ն նետուէ, արդէն ամէն մարդ արթնցած է, հրամայեց ան:

– Ի՞նչ պիտի ընենք այժմ, հարցուցի ես:

– Կամ անմիջապէս վերադարձնելու ենք գայն եւ կամ պահելու ենք մինչեւ վաղը առաւօտ, պատասխանեց Մուրադ:

Սակայն մտահոգ մէկու մը երեսոյթը չունէր հորեղբորորդիս եւ ես վստահ կը գգայի թէ ան ձին պիտի պահէր գէթ ժամանակ մը եւս:

– Ո՞ր պիտի պահենք գայն. հարց տուի:

– Ես տեղ մը գիտեմ, եղաւ իր պատասխանը:

– Ո՞րքան առաջ գողցար գայն, կրկին հարց տուի ես:

Յանկարծ միտքս ինկաւ որ Մուրադ ժամանակէ մը ի վեր առաւօտները կանուխ այսօրինակ պտոյտներ կ'ընէր: Այս առաւօտ եկած էր զիս ալ հետն առնելու՝ լաւ գիտնալով թէ ի՛նչքան մեծ փափաք ունէի ձի հեծնելու:

– Ձիուն գողութեան խօսքն ընողը ո՞վ է, պատասխանեց Մուրադ գրգռուած:

– Ինչեւիցէ, երբէ՞ն ի վեր ձիով պտոյտներ կ'ընես առաւօտները:

– Ասիկա առաջին առաւօտն է:

– Հաւատա՞ն խօսքիդ:

– Ի՞ հարկէ ո՛չ. բայց եթէ բռնուելու ըլլանք այդպէս խօսելու ես. խորհուրդ տուաւ հորեղբորորդիս: Չեմ ուզեր որ երկուքս ալ ստախօս դուրս գանք: Որքան որ դուն գիտես՝ մենք ձիով պտոյտ կատարած ենք միայն այս առաւօտ:

– Շա՛տ լաւ. համաձայնեցայ ես:

Ան կամացուկ մը ձին առաջնորդեց լքուած այգիի մը գոմը, որ ժամանակին Ֆէթվաճեան անունով այգեպանի մը պարծանքն էր եղած: ոմին մէջ դեռ կը մնար բաւական վարսակ եւ առուոյտ:

Սկսանք քալել դէպի տուն:

Դիւրին բան չէ ձիերուն ուզածդ ընել տալ. սկսաւ պարծենալ Մուրադ: Ան նախ ջանաց փախուստ տալ, բայց ինչպէս արդէն ըսի քեզի, ես իմ յատուկ

վարուելակերպս ունիմ ձիերու հետ: Ես իմ ամղն ուզածս կրնամ ընել տալ անոնց:

Անոնք զիս լաւ կը հասկնան:

– Ի՞նչպէս կ'ընես, հարցուցի:

– Իմ եւ անոնք միջեւ յատուկ հասկացողութիւն մը գոյութիւն ունի, կրկնեց

Մուրադ:

– Այո՛, բայց ի՞նչ տեսակ հասկացողութիւն:

– Պարզ եւ պարկեշտ հասկացողութիւն մը:

– Երանի՛ թէ ես ալ կարող ըլլայի նման հասկացողութիւն մը մշակել ձիերու հետ:

– Դու դեռ երախայ մ'ես: Երբ տասնեւերեք տարեկան ըլլաս՝ դուն ալ կերպը կը սորվիս, եղաւ հորեղբօրորդոյս պատասխանը:

Տուն գացի եւ ախորժակով ճաշ մ'ըրի:

Նոյն կէտօրէ վերջ հորեղբայրս Խոսրով մեր տունն եկաւ գաւաթ մը սուրճ խմելու

եւ սիկարէթ մը ծխելու: Ան բազմեցաւ հիւրանոցը եւ սկսաւ ընպել իր սուրճը,

ծխել եւ վերյիշել մեր հինաւորց հայրենիքը: Քիչ յետոյ ներս մտաւ ուրիշ այցելու

մը, Ճան Բայրօ անունով այգեպան մը, ասորի մը, որ առանձնութենէ մղուած

Հայերէն էր սորված: Մայրս մենաւոր այցելուին սուրճ եւ ծխախոտ հրամցուց. եւ

ան եւս սիկարէթ մը փաթթելով սկսաւ իր սուրճն ընպել եւ սիկարէթը ծխել. բայց

ի վերջոյ տխուր հառաչ մը արձակելով խօսք բացաւ – անցեալ ամսու մէջ

գողցուած սպիտակ ձիս դեռ գտնուած չէ: Խելքիս չի պատկիր կոր:

Հօրեղբայրս Խոսրով չափազանց գրգռուած՝ սկսաւ պոռպոռալ – վնաս չունի. ի՞նչ

արժէք ունի ձիու մը կորուստը: Մենք բոլորս մի՞թէ կորսնցուցած չենք մեր

հայրենի երկիրը: Ի՞նչ իմաստ ունի այսպէս լալ ու ողբալ կորսուած ձիու մը վրայ:

– Շատ դիւրին բան է քեզ պէս քաղքցիներու համար այսպէս մեծ մեծ ջարդել,

պատասխանեց Ճան Բայրօ: Հապա ի՞նչ կ'ըլլայ կառքս: Առանց ձիու կառքն ի՞նչ

բանի կու գայ:

– Ականջ մի՛ տար, գոռալով կրկնեց Խոսրով հորեղբայրս իր սովորական

յանկերգը:

– Հոս գալու համար ստիպուած եղայ տասը մղոն տեղ քալել, գանգատեցաւ Ճան Բայրօ:

– Սրունքներդ դեռ կը գործեն չէ՞, պոռաց հորեղբայրս:

– Ձախ սրունքս տկար է, աւելցուց այգեպանը:

– Ատանկ պարապ բաներու ականջ մի՛ տար, պէ՛, շարունակեց գոռալ

հորեղբայրս:

- Այդ ձին վրաս վաթսուն տոլարի նստաւ, շարունակեց այգեպանը:
- Ես թքեր եմ այդ դրամին վրայ, պոռթկաց Խոսրով հորեղբայրս: Ապա ոտքի ցատքելով տունէն դուրս ճեմեց՝ ետեւէն ամուր մը փակելով մաղ-դուռը: Մայրս միջամտելով բացատրեց.
 - Ազնիւ սիրտ մ'ունի ան: Խեղճը այնպէ՛ս հայրենակարօտ է եւ այնպիսի՛ խոշոր կագն մ'ունի որ:
- Այգեպանը մեկնեցաւ եւ ես հորեղբորորդի Մուրադենց տունը փութացի: Մուրադ նստած էր դեղձենիի մը տակ եւ կը ջանար դարմանել թռչելու անգօր կարմրալանջի մը վիրատր թելը: Ան գրոյցի մէջ էր թռչունին հետ:
 - Ի՞նչ է պատահեր, հարց տուաւ ինձ Մուրադ:
 - Այգեպան ճան Բայրոյին հանդիպեցայ, մեզ այցելութեան էր եկած: Ամիս մըն է անցեր ձին բերելէդ ասդին: Կ'ուզեմ որ խօսք տաս ինձի թէ գայն պիտի չվերադարձնես մինչեւ որ ես ալ հեծնել սորվիմ:
 - Տարի մը կ'առնէ մինչեւ քու սորվիլդ, դիտել տուաւ Մուրադ:
 - Այն ատեն տարի մը պահելու ենք գայն, թելադրեցի ես:
 - Ի՞նչ, վրաս գոռաց Մուրադ, արօղլանեան գերդաստանի անդամի մը գողութիւն գործելու թելադրա՞նք կ'ընես: Ձին իր պատկան տիրոջ վերադարձուելու է:
 - Ե՞րբ, հարցուցի ես շուարած:
 - Ամէնէն ուշը վեց ամիսէն, եղաւ իր պատասխանը:
 - Մուրադ թռչունն օդին մէջ նետեց: Խեղճ անասունը թռչելու մեծ ճիգ ի գործ կը դնէր: Երկու անգամ քիչ մնաց վար պիտի իյնար, բայց վերջապէս թռաւ գնաց՝ բարձրէն եւ շիտակ:
- Ամբողջ երկու շաբաթ Մուրադ եւ ես առաւօտուն կանուխ դուրս կը բերէինք ձին իր թաքստոց ծառայող լքուած այգիի մը գոմէն եւ վրան կը հեծնէինք: Երբ մինակս հեծնելու կարգն ինս կ'ըլլար՝ ան որթատունկերու եւ ցած ծառերու վրայէն ցատկոտելով գիս վար կը ձգէր եւ փախուստ կու տար: Այսուհանդերձ ես դեռ յոյսս կտրած չէի թէ Ժամանակի ընթացքին Մուրադին չափ լաւ ձի հեծնել պիտի սորվէի:
- Առաւօտ մը երբ Ֆէթվաճեանի լքուած այգին կ'երթայինք՝ քաղաքի ճամբուն վրայ մեր դիմացն ելաւ այգեպան ճան Բայրօն:
 - Բարի լո՛յս, ճան Բայրօ, ըսաւ Մուրադ այգեպանին:
 - Աստուծոյ բարի՛ն, իմ բարեկամներուս տղաքը, պատասխան տուաւ ան: Ի՞նչ է

ձեր ձիուն անունը:

– Իմ Սիրտս, ըսաւ Մուրադ Հայերէն:

– Սիրո՛ւն ձիո՛ւ սիրո՛ւն անուն, եղաւ Ճան Բայրոյի նկատողութիւնը: Կերդնում որ ասիկա քանի մը շաբաթ առաջ ինձմէ գողցուած ձին է: Թոյլ կու տա՞ք որ բերանը քննեմ:

– Անշո՛ւշտ, աճապարեց պատասխանել Մուրադ:

Այգեպանը ձիուն բերանը քննեց:

– Ակոյայ առ ակոյայ նոյնինքն է, եզրակացուց ան: Պիտի չվարանէի երդում ընել թէ ասիկա իմ ձիս է, եթէ ճանչցած շրլլայի ձեր ծնողքը: Ծանօթ է ինձ ձեր ծնողաց պարկեշտութեան համբարը: Բայց եւ այնպէս ձին իմ ձիուս գոյգն է: Կասկածամիտ մէկն ատելի պիտի հաւատար իր աչքերուն քան իր սրտին: Բարի ճանապարհի, իմ դեռատի բարեկամներս:

Մնա՛ս բարով, Ճան Բայրօ, պատասխան տուաւ հօրեղբօրորդիս Մուրադ:

Յաջորդ առաւօտ կանուխ Ճան Բայրոյի այգին գացինք եւ ձին գոմը կապեցինք:

Շուները մեր բոլորտիքը կը դառնային անաղմուկ:

– Շուներուն նայէ՛, փսփսացի Մուրադին: Կը կարծէի թէ պիտի հաջէին:

– Կը հաջէին եթէ եկողն ուրիշ մէկն ըլլար, յոխորտաց Մուրադ: Սակայն ես անոնց հետ վարուելու կերպը գիտեմ:

Հօրեղբօրորդիս գրկախառնուեցաւ ձիուն հետ: Իր քիթը սեղմելով անոր քթին՝ շոյեց գայն: Ապա մեկնեցանք:

Նոյն կէտօրէ վերջ Ճան Բայրօ իր կառքով մեր տունն եկաւ եւ ցոյց տուաւ իր գողցուած բայց յետոյ վերադարձուած ձին:

– Մէջէն չեմ կրնար կոր ելլել, կը կրկնէր ան: Փա՛ռք Տիրոջ, ձիս թէ՛ ռեւէ

Ժամանակէ ատելի լաւ վիճակի մէջ է եւ թէ՛ ալ ատելի մեղմաբարոյ:

Հօրեղբայրս Խոսրով, որ այս պահուս հիւրանոցը կը գտնուէր, զայրացած սկսաւ պոռպոռալ – ձայնդ կտրէ՛, մարդ Աստուծոյ, ձայնդ կտրէ՛, ատանկ պարապ բաներու ականջ մի՛ տար:

ԱՍԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ ԴԷՊԻ ՀԷՆՖԸՐՏ

Վերջապէս հասաւ այն օրը՝ երբ տարաբախտ հօրեղբայրս ճորգի կարգի դնելու էր իր հեծանիւր եւ երթալու՝ Հէնֆըրտ, մեզմէ քսանեւեօթը մղոն հեռու, ուր կը թուէր թէ պիտի կարենար գործ մը ճարել: Ես եւս ընկերացայ իրեն, թէպէտ նախ խօսք եղաւ իմ տեղս հօրեղբօրորդոյս Վազգի երթալուն մասին:

Մեր ընտանիքը իր յարկին տակ Ճորգիի նման խելի մը պատասպարած ըլլալուն

համար մասնատր դժգոհանք մը արտայայտել չէր ուզեր թելալտ, բայց կ'ուզեր գէթ ամրան ընթացքին պահ մը անոր գոյութիւնը մոռնալու առիթն ունենալ: Ճորգիի Հէնֆըրտ երթալն ու գործ մը ճարելն ամէն տեսակէտէ լաւ պիտի ըլլար: Նախ՝ ինքը Ճորգի քիչ մը դրամ պիտի վաստակէր եւ յետոյ՝ պահ մը աչքէ հեռու կ'ըլլար ան: Կարենորը զինք աչքէ հեռու պահելն էր:

– Ետինն անցնի ինքն ալ իր քանոնն ալ, – կը սրտնեղէր մեծ հայրս: Եթէ երբեք գիրքի մը մէջ կարդալու ըլլաք մարդու մը մասին, որ ծառի մը տակ նստած օրն ի բուն քանոն կը նուագէ, գիտցէ՛ք որ գիրքին հեղինակը անգործնական մարդուն մէկն է: Թո՛ղ երթայ իր քանոնին հետ քիչ մը քրտնի արեւին տակ:

– Հիմա է որ այդպէս կ'ըսես, – միջամտեց մեծ մայրս: Ես հետոյ կը խօսիմ շաբաթ մը յետոյ: Սպասէ՛ մինչեւ որ երաժշտութեան կարօտն զգանք նորէն:

– Պարապ խօ՛սք, – պատասխանեց մեծ հայրս: Եթէ երբեք գիրքի մը մէջ կարդալու ըլլաք թէ՛ երջանիկ մարդն այն է, որ երգել կը սիրէ, գիտցէ՛ք որ գիրքին հեղինակը պարզապէս երագատես մըն է, որ հազար տարիէն գործնական մէկը չի կրնար ըլլալ: Թողէ՛ք որ երթայ: Հէնֆըրտ մեզմէ միայն քսանեւեօթը մղոնի հեռաւորութիւն ունի: Բանատր հեռաւորութիւն մը արդարեւ:

– Հիմա է որ այդպէս կ'ըսես, – կրկնեց մեծ մայրս: Երեք օր չանցած մելամաղձոտութիւնը քեզ պիտի պատէ: Այն ատեն վստահ եմ թէ վագրի նման բոլորտիքդ պիտի դառնաս եւ ես պիտի ըլլամ քու վրադ խնդացողը:

– Վերջապէս կնիկմարդ ես, – շարունակեց մեծ հայրս: Եթէ երբեք հարիւրատր էջերէ բաղկացած մանր գիրերով գիրքի մը մէջ կարդալու ըլլաք թէ՛ կնիկմարդ ըսուածը իսկապէս հրաշակերտ մըն է, գիտցէ՛ք որ գիրքին հեղինակը իր կնոջմէ երես դարձուցած երագներու աշխարհին մէջ կը թափառի: Թողէ՛ք որ երթայ:

– Խօսքին պարզն այն է՝ որ դուն այլեւս երիտասարդ մը չես եւ այդ է որ քեզ այսպէս մոռնել կուտայ, – քննադատեց զինքը մեծ մայրս:

– Բերանդ գոցէ՛, – սաստեց մեծ հայրս, բերանդ գոցէ՛, թէ չէ ապտակը կը հասնի:

Մեծ հայրս պահ մը աչքերը իր գաւակներուն եւ թոռներուն վրայ պտտցնելէ յետոյ շարունակեց.

– Ես այն կարծիքէն եմ որ ան Հէնֆըրտ երթալու է իր հեծանիով: Ի՞նչ է ձեր կարծիքը:

Բերան բացող չեղաւ:

– Ապա ուրեմն այդ հարցը վճռուած է, – եզրակացուց ան: Այժմ տեսնենք թէ ո՛վ

երթալու է անոր հետ: Մեր անկարգ տղոցմէ ո՞ր մէկը պիտի կրէ ճորգիին ընկերակցելու պատիժը: Եթէ երբեք գիրքի մը մէջ կարդալու ըլլաք թէ՛ ուրիշ քաղաքներ ճամբորդելը երիտասարդներու համար հաճելի փորձառութիւն մըն է, գիտցէ՛ք որ գիրքին հեղինակը ուրսուն կամ իննիսունամեայ ծերուկ մըն է, որ իր տղայութեան օրերուն տունէն կառքով հեռացած է հագի երկու մղոն: Այժմ ո՞ր մէկը պատժելու է: Վա՞գգը: Պատժուողը Վա՞գգը պիտի ըլլայ: Առա՛ջ եկուր, տղա՛յ:

Վագգ ոտքի ելլելով կանգնեցաւ ծերունիին առջեւ: Մեծ հայրս խոժոռ ակնարկ մը նետեց անոր վրայ, պեխերը ոլորելով եւ կոկորդը մաքրելով: Ապա իր ձեռքը դրաւ անոր երեսին վրայ՝ գայն ամբողջապէս ծածկելով: Վագգ անշարժ կեցած էր:

– Կուգե՞ս ճորգի հօրեղբօրդ հետ Հէնֆրրտ երթալ, – հարցուց մեծ հայրս:
– Եթէ այդ հաճոյք կը պատճառէ մեծ հօրս՝ կ’երթամ, – պատասխանեց Վագգ:
Յայտնապէս ծերունին հարցը կը վերանկատէր՝ իր դէմքին տալով մասնաւոր ծամածռութիւն մը:

– Պահ մը մտածե՛նք, – յարեց ան: Ճորգի մեր տոհմի յիմար արարածներէն է, նմանապէս դուն: Չգիտեմ թէ ո՞րքան խոհեմութիւն պիտի ըլլար երկու յիմար կողք կողքի դնել:

Ապա ան դարձաւ միսներուն:

– Կուգեմ լսել այս հարցին մասին ձեր ալ կարծիքները: Կը կարծե՞ք թէ խոհեմութիւն կ’ըլլայ միեւնոյն տոհմին պատկանող անչափահաս յիմար մը դնել չափահաս յիմարի մը կողքին. կրնա՞յ արդեօք այդ օգտակար ըլլալ մէկն ու մէկին: Յայտնեցէք ձեր կարծիքներն որ նկատի ունենամ գանոնք:

– Կը կարծեմ թէ այդ պիտի ըլլայ մեր ընելիք բնական բանը. խօսք առաւ Չօհրապ հօրեղբայրս: Այո՛. երկու յիմարներ կողք կողքի. չափահասը դուրսը կը գործէ, իսկ տղան տնական գործերու կը նայի եւ կերակուր կ’եփէ:

– Թերեւս. ըսաւ մեծ հայրս: Մտածե՛նք: Երկու յիմարներ կողք կողքի. մէկը դուրսը գործելու համար, իսկ միւսը տնական գործերու նայելու եւ կերակուր եփելու: Կերակուր կրնա՞ս եփել, տղա՛յ:

– Անտարակոյս կրնայ եփել, պատասխանեց մեծ մայրս: Ամէն պարագայի տակ գոնէ բրինձ կրնայ խաշել:

– Ճի՞շդ է թէ բրինձ կրնաս խաշել՞ տղա՛յ, հարց տուաւ մեծ հայրս: Չորս գաւաթ ջուր, մէկ գաւաթ բրինձ եւ մէկ թէյի դգալ աղ: Ասոնցմէ լակի տեղ կերակուր պատրաստելու գաղտնիքին ծանօթ ես, թէ չէ մենք լոկ կ’երազենք:

- Անտարակոյս կրնայ բրինձ խաշել, պնդեց մեծ մայրս:
- Հինա բերնիդ ապտակ մը կ'իջեցնեն, սպառնաց մեծ հայրս: Տղան անլեզու չէ. թոյլ տո՛ւր որ ինք խօսի: Կրնա՞ս այդքանն ընել, տղա՛յ: Եթէ երբեք գրքի մէջ կարդալու ըլլաք թէ՛ տղեկ մը ծերուկի մը իմաստուն պատասխաններ տուած է, գիտցէք որ գրքին հեղինակը չափազանցելու սովոր հրեայ մըն է: Կրնա՞ս լակի տեղ կերակուր նմանցնել եփածդ, տղա՛յ:
- Ես բրինձ խաշած եմ որ կերակուրի նմանած է, – պատասխանեց Վազգ:
- Մէջը պէտք եղածին չափ աղ դրա՞ծ էիր, – հարցուց մեծ հայրս: Եթէ փորձուիս ստել, յիշէ ապտակս:
- Վազգ բոպէ մը տատամսեցաւ:
- Կը տեսնեն թէ բրինձի խօսքն ընելով քեզ քիչ մը նեղը ձգեցինք, նկատել տուաւ մեծ հայրս: Ուել սխալ գործա՞ծ ես բրինձ եփած պահուդ: Ես միայն ճշմարտախօսութենէ հաճոյք կ'առնեմ: Խօսէ՛ անվախօրէն: Եթէ անվախօրէն ճշմարտութիւնը խօսելու ըլլաս, մարդ աւելին չի կրնար պահանջել քեզմէ:
- Բրինձի կապակցութեամբ ի՞նչն է որ քեզ նեղը ձգեց:
- Շատ աղի էր, խոստովանեցաւ Վազգ: Այնքա՛ն աղի՛ որ ամբողջ օրը՝ գիշեր ցորեկ ջուր խմել ստիպուեցանք:
- Աւելորդ զարդարանքի հարկ չկայ. միայն ճշմարտութիւնն ըսէ՛ – բրինձը շատ աղի էր: Բնականաբար ամբողջ օրը՝ գիշեր ցորեկ ջուր պիտի խմէիր: Մեզմէ ամէն մէկն այդ տեսակ բրինձ ճաշակած : Մի՛ խորհիր թէ դուն միակ Հայն ես որ ամբողջ օրը՝ գիշեր ցորեկ ջուր խմած է: Միայն ըսէ՛ թէ բրինձը շատ աղի էր: Ես հոս եկած չեմ ձեզմէ քան սորվելու. ես ամէն ինչ գիտեմ: Միայն ըսէ՛ թէ բրինձը շատ աղի էր եւ թոյլ տուր որ ես ինքս որոշեմ թէ գացողը դուն պիտի ըլլաս թէ ոչ: